# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 22

## ՀՀ Լոռու մարզպետի մոտ կայացած խորհրդակցության

**19.10.2017թ.** **ք.Վանաձոր**

**Մասնակցում էին**

Հ.Թադևոսյանը - մարզպետի տեղակալ

Ա.Ջանազյանը, Դ.Մանուչարյանը, Գ.Հակոբյանը, Ա.Օհանյանը - մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ

Վանաձորի, Տաշիրի, Ստեփանավանի, Ախթալայի, Շամլուղի քաղաքային համայնքների ղեկավարները

Մարզային ոստիկանության վարչության, ճանապարհային ոստիկանության, փրկարարական վարչության, թիվ 3 բանակային կորպուսի ներկայացուցիչներ

Գյուղական համայնքների ղեկավարներ

**Օրակարգում՝**

Հոկտեմբերի 21-ին նախատեսված համապետական շաբաթօրյակի կազմակերպման աշխատանքների մասին

/Զեկ. Հ.Թադևոսյան/

**Հանձնարարվեց՝**

ՀՀ Լոռու մարզպետի տեղակալ Հ.Թադևոսյանին, ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներին, բոլոր կառույցների ղեկավարներին՝

Անհրաժեշտ նախապատրաստական աշխատանքներ տանել և ակտիվ մասնակցություն ցուցաբերել ս.թ. հոկտեմբերի 21-ին կայանալիք համապետական 3-րդ շաբաթօրյակի աշխատանքներին:

**Առաջարկվեց՝**

1. Թիվ 3 բանակային կորպուսի ներկայացուցչին՝

երկրապահների հետ միասին պանթեոնի տարածքում ծառատունկ կազմակերպել:

2. Համայնքների ղեկավարներին՝

2018թ. բյուջեում հնարավորության դեպքում նախատեսել տեսախցիկների տեղադրում փողոցներում համայնքը աղտոտողներին վարչական տույժի ենթարկելու նպատակով: Այդ գործընթացին ներգրավել հովանավոր ձեռնարկություններին և անհատների:

**ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ** **Ա. ՆԱԼԲԱՆԴՅԱՆ**